Տեղեկանք

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին» համաձայնագրի վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017թ. մայիսի 26-ին:

Համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ սահմանվում են ԵԱՏՄ անդամ պետությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաներ տրամադրելու հետ կապված փոխգործակցության հարցերը, ինչպես նաև սահմանվում է անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրումը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաներ տրամադրելու հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգը:

Համաձայնագիրը հնարավորություն կընձեռի կիրառել արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաների համաձայնեցման մեխանիզմը, ինչի շնորհիվ կապահովվեն Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև բարեխիղճ մրցակցության սկզբունքները: Դրա հետ մեկտեղ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, հանդիսանալով երրորդ՝ ոչ շահագրգիռ կողմ, քննություն սկսելու մեխանիզմի իրավունք ունենալու դեպքում կապահովի անկախ և օբյեկտիվ վերլուծություն՝ անդամ պետությունների կողմից տրամադրվող արդյունաբերական սուբսիդիաները Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրի դրույթներին համապատասխանության տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը նպատակահարմար է համարում Համաձայնագրի վավերացումը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ չի ստանձնում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը հայտնել է, որ Համաձայնագրի դրույթները չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենքներին կամ այլ նորմատիվ իրավական ակտերին և Համաձայնագիրը չի պարունակում Հայաստանի Հանրապետության նոր օրենք կամ այլ նորմատիվ իրավական ակտ ընդունելու կամ գործող օրենքում կամ այլ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ կատարելուն վերաբերող նորմեր:

Համաձայնագրի 26-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ստանալու օրվանից:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հայտնում է, որ վերոհիշյալ Համաձայնագիրը ենթակա է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը:

ՀՀ արտաքին գործերի
նախարարի տեղակալ **Շավարշ Քոչարյան**